Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԼՈՒՍԻՆԵ-ԿԻԼԻԿԻԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վաղարշապատ համայնքի Վաղարշապատ բնակավայրի (Էջմիածին ք.) Կարճիկյան փ. 2 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության 2-րդ հանրային լսման վերաբերյալ

Վաղարշապատ բն.
14.07.2025թ.

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- Հանրաին լսման վարող և պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ հանրային քննարկումների վարող և պատախանատու՝ Նելլի Նասիբյանը,
- Վաղարշապատի համայնքապետարանի ներկայացուցիչներ՝ Ս. Աղաջանյանը, Մ. Պողոսյանը, Մ. Զաքարյանը
- Տնօրեն Խ. Հովհաննիսյանը
- Ընկերության բնապահպան՝ Ա Մինասյանը,
- Ճարտարապետ՝ Ա. Մարտիրոսյանը

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի՝ 2025թ. հուլիսի 14-ին՝ ժամը 12:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի դահլիճում տեղի ունեցավ «ԼՈՒՍԻՆԵ-ԿԻԼԻԿԻԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վաղարշապատ բնակավայրի (Էջմիածին ք.) Կարճիկյան փ. 2 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնի մասնագետ Ն. Նասիբյանը, որը ներկայացրեց Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը, փորձաքննության իրականացման ընթացակարգը, նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, բացասական հնարավոր ազդեցությունների կանխելու կամ հանարվորինս նվազեցնելու համար նախատեսվող բնապահապանական միջոցառումները, մշտադիտարկումները:

Նշեց նաև, որ գնահատման հաշվետվությունը մշակվել և փորձաքննությունը իրականացվել է համապատասխան Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի պահանջների համապատասխան:

Այնուհետ խոսքը փոխանցվեց ձեռնարկողին, ով ներկայացրեց նախատեսվող գործունեությունը:

Փորձաքննական կենտրոնի մասնագետի կողմից հարցեր բարձրացվեցին կանաչապատման աշխատանքների, նախատեսվող գործունեության և հարևանությամբ առկա շենք-շինությունների հեռավորությունների, առկա գրունտային ջրերի վերաբերյալ, որոնց վերաբերյալ տրվեցին պարզաբանումներ և սպառիչ պատասխաններ, նշվեց, որ ապահովելու է 0-ական նիշում, (հորիզոնական) նախատեսված, նախագծման թույտվությամամբ սահմանված կանաչապատման մակերեսը (3884.04 քմ 45.8 %), իսկ ամենմոտ հեռավորությունը մոտակա շենք-շինություններից կազմում է 22մ., և քանի որ տարածքում առկա գրունտային ջրերի խորությունը տատանվում է 6.4-6.8 մ սահմաններում, ապա շենքերի հիմքերի տեղադրման նիշը լինելու է -4.8մ սահմաններում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնի մասնագետ Ն. Նասիբյանը հավելեց, որ նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ շահագրգիռ հանրության դիտողությունները, առաջարկությունները և կարծիքները կարող են ներկայացնել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ ծանուցման օրվանից հաշված՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները մասնակիցները որոշեցին հավանություն տալ նախատեսվող գործունեությանը:

Հանրային քննարկումների պատասխանատու և վարող՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն»ՊՈԱԿ-ի մասնագետ՝

Ն. Նասիբյան՝ _____

Նախաձեռնող՝ «ԼՈՒՍԻՆԵ-ԿԻԼԻԿԻԱ» ՍՊԸ

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը: